# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հոկտեմբերի 2015 թվականի N 1124-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 13-ի N 8-Ա որոշմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման հողամասերից Փանիկի 1-ին փողոցի թիվ 54/1 հասցեում գտնվող՝ 0,04 հեկտար մակերեսով և 88800 դրամ կադաստրային արժեքով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 01072015-08-0023, 01.07.2015 թ.) որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականություն և ամրացնել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում նախատեսված անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցման ու սպասարկման նպատակով օգտագործելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի ղեկավարի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նվիրաբերության պայմանագիր.

2) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հանձնման-ընդունման և գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքները՝ դրանք իրականացնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Փանիկի համայնքի միջոցների հաշվին:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ** **Հ. Աբրահամյան**

2015 թ. հոկտեմբերի 5
Երևան